

ԱՐՄԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՆԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ԲԱՅԻ ՍԵՌԻ ՎԻՃԱՀԱՐՈՒՅՑ ՀԱՐՑԵՐԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ.

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՏ.

ՍԵՌՈՐՈՇ ՄԱՍՆԻԿՆԵՐ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i69.175

ԱՄՓՈՓՈՒՄ

Լեզուն կենդանի օրգանիզմ է և ժամանակի ընթացքում ենթակա է զանազան ազդեցությունների ու փոփոխությունների: Բայի սեռը առավել, քան լեզվական այլ միավոր կամ քերականական կարգ, բավականին փոփոխվել է տարիների ու հարյուրամյակների ընթացքում: Եվ հիմա մենք ունենք վիճահարույց բազմաթիվ հարցեր՝ կապված բայի սեռորոշմանը: Մեր աշխատանքի նպատակն է ցույց տալ այդ փոփոխությունները, հիմնավոր պատասխան տալ խնդրահարույց հարցերին:

Հիշենք՝ բայի սեռի կարգը ցույց է տալիս քերականական ենթակայի ու խնդրի, տրամաբանական սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերությունը: Այսինքն՝ սեռը արտահայտում է բայի՝ խնդիր վերցնելու հատկությունը և հարաբերությունը այդ խնդրի ու ենթակայի հետ:

Ներկայացնելով համառոտ ուսումնասիրություն նաև սեռորոշման հիմունքներից՝ տալու ենք սեռի կարգի քերականական կանոնիկ պատկերը թե՛ արևելահայերենում, թե՛ արևմտահայերենում: Կան իրարամերժ կարծիքներ ու խիստ տարբեր տեսանկյուններ: Ի մի կերպ ենք սրանք, կամփոփենք, կհասկանանք՝ ինչպես են սեռորոշման հիմունքները օգնում՝ տարբերակելու բայի սեռը, պատասխանելու սեռին վերաբերող վիճահարույց բոլոր հարցերին: Համառոտ կտանք նաև ժամանակակից հայերենի սեռերի ուսումնասիրության

գործընթացի տասնամյակների պատկերը: Համեմատություններ կանենք արևմտահայերենի հետ ևս:

Բանալի բառեր և արտահայտություններ. բայի սեռ, չեզոք, ներգործական, կրավորական, մասնիկ, բայ, ածանց, ուղիղ խնդիր:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բայի անցումային, կրողական, ազդեցական, անմիջական կապի հարաբերությունները ձևավորում են նրա սեռի կարգը: Հնդեվրոպական նախալեզվին հատուկ է եղել բայասեռի տարբերական անհստակություն: Սեռերը էականորեն չեն տարբերվել իրարից, արտահայտվել են դիմային վերջավորություններով, որոնք ունեցել են նաև կերպաժամանակային նշանակություն: Կարելի էր տարբերակել ներգործական սեռ և սրան հակադրվող ոչ ներգործական սեռ՝ *միջին սեռ*, որն ունեցել է այլ վերջավորություններ՝ երկշարք կամ միաշարք (**Աբրահամյան Ա., 1962**):

Մեր աշխատանքը բաղկացած է երկու ենթագլուխներից: Առանձին ենթագլխով տալիս ենք նաև սեռանիշ մասնիկների համառոտ վերլուծություն:

Նյութն ավարտում ենք եզրակացությամբ, որով ամփոփում ենք մեր աշխատանքը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի կատարման համար օգտագործել ենք հիմնականում ուսումնասիրման, զննման, գնահատման մեթոդները: Մանրակրկիտ ձևով քննել ենք առկա վերլուծական գրականությունը, տարբեր հեղինակների աշխատությունները, կատարել համեմատական վերլուծություններ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հետևյալ բայերը արտահայտում են ժամանակակից հայերենի սեռերի համակարգը. մոտենալ-մոտեցնել-մոտեցվել, հեռանալ-հեռացնել-հեռացվել, բարձրանալ-բարձրացնել-բարձրացվել, գրել-գրվել, սիրել-սիրվել, հարգել-հարգվել:

Առաջին խմբի երեք շարքերը իրար են հակադրված և՛ ձևով, և՛ իմաստով: Եռյակ բայերից առաջինները ցույց են տալիս այնպիսի գործողություն, որոնք ենթական կատարում է ինքնին ու ուղիղ խնդիր չի պահանջում, երկրորդները՝ այնպիսի գործողություն, որը ենթական կատարում է օբյեկտի հարաբերությամբ, և որի կատարման համար պահանջվում է ուղիղ խնդիր, իսկ մյուսները՝ գործողություն, որը խնդրից անցնում է ենթակային: Երկյակ բայերից առաջինները պահանջում են ուղիղ խնդիր, մյուսները գործողությունը խնդրից փոխանցում են ենթակային:

1. Բայասեռի ըմբռնումը և ձևակերպումը արևելահայերենում:

1.1. Բայասեռի նկարագրությունը քերականական աշխատություններում:

Ա. Աբրահամյանի ձևակերպմամբ՝ սեռը, բայի հատկություն լինելով, բոլոր դեպքերում չի ներկայանում սոսկ որպես ներքին, իմաստային կողմ, այն ստանում է նաև քերականական արտահայտություն՝ լեզվի քերականական միջոցների գործադրմամբ: Սեռի ցուցիչներ են *-վ-*, *-ցն-* մասնիկները (Աբրահամյան Ա., 1962):

Պալասանյանը նշում է երեք տեսակի սեռեր՝ ներգործական, կրավորական, չեզոք: Սեռերը տարբերակում է ըստ *անցում*, *կրում* ունենալու հատկանիշների, որոնց միջոցով էլ սահմանումներ է տալիս. ներգործականը ցույց է տալիս գործողության անցում ուրիշ առարկայի վրա, կրավորականը՝ կրում ուրիշ առարկայից, չեզոքը ցույց է տալիս գործողություն, որը «գործողի մեջ է մնում» (Պալասանյան Ա., 1906) :

Մ. Աբեղյանը բոլոր բայերը բաժանում է ենթակայական և առարկայական, անցողական և անանցողական տեսակների: Ըստ վերջինների՝ առանձնացնում է ներգործական, պատճառական, կրավորական, չեզոք բայեր, որոնք հետո անվանում է սեռեր (Աբեղյան Մ., 1912):

Հ. Աճառյանը ընդունում է գործողության և ենթակայի միջև եղող առնչությունը՝ ենթակայի ազդելը այլ առարկայի վրա, ենթակայի ազդվելը այլ առարկայից (**Աճառյան Հ., 1959**):

Ա. Ղարիբյանը փորձել է ավելի համապարփակ վերլուծել երևույթը՝ խոսելով

սեռերի և նրանց խնդրառության, կրավորական ձևերի անդրադարձ նշանակության մասին՝ ներգործականի և չեզոքի տարբերություն համարելով առաջինների անցողականությունը, երկրորդի անանցողականությունը (**Ղարիբյան Ա., 1937**):

Գ. Սևակը նշում է, որ ներգործական սեռի բայերը պահանջում են անմիջական առարկա *ու՛մ, ի՞նչ* հարցերով, կրավորականները՝ կրում մի ուրիշ առարկայից՝ *-վ-* ածանցով և *ու՛մից, ինչի՞ց, ու՛մ կողմից* հարցերով, չեզոքը՝ առանց ներգործելու և կրելու գործողություն (**Սևակ Գ., 1939**):

Է. Աղայան սեռերը առանձնացնում է՝ ըստ երկու տեսակի հիմքերի՝ ըստ ենթակայի և գործողության հարաբերության՝ ներգործական, կրավորական, չեզոք, ըստ գործողության և խնդրի հարաբերության՝ անցողական և անանցողական (**Աղայան Է., 1951**):

Հ. Բարսեղյանը նշում է, որ ներգործական սեռի դեպքում տրամաբանական ենթական կամ սուբյեկտը պահանջում է կրող առարկա, չեզոքի դեպքում նման առարկա կամ օբյեկտ չի պահանջվում, կրավորական սեռի բայի ենթական տրամաբանական օբյեկտն է (**Բարսեղյան Հ., 1953**):

Դ. Գյուլգատյանը պատճառական սեռը դիտում է եռարժույթ բայերի տիրույթում, ներգործական և կրավորական սեռերը՝ երկարժույթ, անդրադարձ և փոխադարձ սեռերը՝ միարժույթ, չեզոք սեռը՝ արժութագուրկ կամ զրո արժույթ (**Գյուլգատյան Դ., 2015**):

1.2.Ներգործական սեռ: Ներգործական կառույցներում գործող ելակետը ենթական է, որը պահանջում է իր հետ հարաբերության մեջ մտնող, գործողությունը իր վրա կրող առարկա: Ներգործական սեռի բայերը պահանջում

են միշտ հայցական հոլովով լրացում՝ անձի դեպքում տրականաձև, իրի դեպքում՝ ուղղականաձև: Սա անմիջապես բխում է բայի էությունից: Նրա պահանջած ուղիղ խնդիրը ընդունում է *ու՛մ, ի՞նչ* հարցերը: Ուղիղ խնդիր և ներգործական բայ հարաբերությունները կարող են բազմապիսի լինել: Նշենք ամենակարևորները.

. ուղիղ խնդիրը կարող է ներգործվել, փոփոխվել, ազդվել՝ *նորոգել պատը, սպանել մարդուն, կոտրել բաժակ, պատռել էջը* և այլն:

. ուղիղ խնդիրը կարող է լինել որպես արդյունք գործողության հետևանքով՝ *գրել գիրք, կառուցել տուն, սրտեղծել բանակ* և այլն:

. ուղիղ խնդիրը կարող է լինել այն առարկան, որի վրա ուղղված է գործողությունը իր ամբողջ ծավալով՝ առանց իրական փոփոխություններ մտցնելու նրանց մեջ՝ *դիտել ֆիլմը, սիրել հայրենիքը, լսել ծայնը, մոռանալ նրան, զգալ ամեն ինչ* և այլն:

Ներգործական և կրավորական սեռի հետ կապված լրացումները կոչվում են սեռի խնդիրներ: Որոշ լեզվաբաններ ներգործական սեռի բայերի պահանջով դրված ուղիղ խնդիրը կոչում են կրող խնդիր:

Ներգործական բայերը, ըստ իրենց կազմության, լինում են պարզ՝ *գրել, բարեկարգել, հաղթահարել, և* բաղադրյալ՝ *մտցնել, բարձրացնել, թաքցնել*: Հայերենի ներգործական բայերի ստվար մասը պատճառական բայերն են, որոնց մեծ մասը ներգործական սեռի են:

Չեզոք բայերի մի մասը, ստանալով *-ցն-* ածանցը, դառնում է ներգործական՝ *մեծանալ-մեծացնել, բարձրանալ-բարձրացնել, հեռանալ-հեռացնել* և այլն:

-Ցն- կարող են ստանալ նաև որոշ ներգործական բայեր՝ *հասկանալ-հասկացնել, հագնել-հագցնել, խմել-խմեցնել, տեսնել-տեսցնել, կարդալ-կարդացնել*:

Ներգործականից ստեղծված պատճառականների և պարզ ներգործականների միջև կա տարբերություն: Սրանք պահանջում են մեկ այլ

առարկա՝ ենթակայի գործողության ազդեցության տակ մեկ այլ առարկայի վրա ազդելու համար. *Մայրը զգեստ է հագնում երեխային:*

Սակայն ոչ բոլոր *–ցն–* ածանց ունեցող բայերն են ներգործական: Կան պատճառական բայեր, որոնք չեն պահանջում ուղիղ խնդիր, չեն ազդում այլ առարկայի վրա, սեռով չեզոք են, այլ ոչ թե ներգործական: Օրինակ՝ *խոռացնել, խոխոռացնել, չփփացնել, փնչացնել, փռշտացնել*, որոնք բնածայնական գործողության պատճառականաձև չեզոք սեռի բայեր են:

Պատճառական բայեր են կազմվում նաև *տալ* բայի հարադրությամբ՝ *սիրել-սիրել տալ, բերել-բերել տալ, հեռացնել-հեռացնել տալ, ավելացնել-ավելացնել տալ* և այլն: *Տալ* բայով պատճառականները ցույց են տալիս գործողություն, որը ոչ թե ենթական է կատարում, այլ կատարել է տալիս, դրդում է մեկ ուրիշին:

Երբեմն ներգործական սեռի բայերը ունենում են ոչ թե հայցական, այլ բացառական հոլովով դրված ուղիղ խնդիր, որը կոչվում է մասնական ուղիղ խնդիր՝ *ուտել հացից, խմել ջրից, ուղարկել գրքից, տալ նյութերից* և այլն: Մասնական ուղիղ խնդիրը չպետք է շփոթել մասնական ենթակայի հետ: Տարբերակվում են սրանք *–վ–* ածանցի միջոցով՝ *Հաղորդում էին Կոմիտասի ստեղծագործություններից: Հաղորդվում էր Կոմիտասի ստեղծագործություններից:*

Ինչպես նշեցինք, ուղիղ խնդիրը հայցական հոլովով է դրվում՝ անձի դեպքում՝ տրականաձև, իրի դեպքում՝ ուղղականաձև. *Աղջիկը ճանաչեց մարդուն: Սիրում եմ մուգ երկինքը:* Կենդանիների անունները անորոշ առումով գործածվելու դեպքում դրվում են ուղղականաձև հայցականով՝ *Մի մեծ շուն ուներ Ավոն:* Որոշյալ առման դեպքում դրվում են տրականաձև հայցականով՝ *Ավոն սիրում էր իր շանը:* Որոշ դեպքերում անձը, որն իրի փոխարեն է գործածվում, դրվում է ուղղականաձև հայցականով՝ *Ամուսինները տղա որդեգրեցին:*

1.3.Կրավորական սեռ: Կրավորական սեռը արդի հայերենում բայի քերականական ձևափոխությամբ ստացվող սեռ է: Գործողությունը կամ եղելությունը քերականորեն ներկայացվում է հակադարձ ուղղությամբ: Արդի

հայերենում կրավորական սեռը կազմվում է ներգործական սեռից հատուկ ձևային՝-վ- ածանցի հավելման միջոցով: Սակավ բացառություններով յուրաքանչյուր ներգործական սեռի բայ ունի իրեն համապատասխան կրավորականը՝ *բարձրացնել-բարձրացվել, զգալ-զգացվել, կարդալ-կարդացվել, գրել-գրվել, մեծացնել-մեծացվել, պարզևարել-պարզևարվել*:

Եթե ներգործական սեռի բայերը ցույց են տալիս մի գործողություն, որ ենթակայից անցնում է խնդրին, ապա կրավորական սեռի բայերը ցույց են տալիս խնդրից ենթակային անցնող գործողություն:

Սուկ –վ-ի առակայությունը բավական չէ բայը կրավորական համարելու համար: Մեծ մասամբ գրեթե բոլոր ներգործական կառույցի նախադասությունները կարող ենք փոխել կրավորականի. *Ճարտարապետը քանդակեց արձանը: Արձանը քանդակվեց ճարտարապետի կողմից:* Ներգործական նախադասությունում քերականական սուբյեկտը և օբյեկտը համապատասխանում են տրամաբանական սուբյեկտին և օբյեկտին, մինչդեռ երկրորդում՝ կրավորականում, տրամաբանական սուբյեկտը դառնում է անուղղակի խնդիր, տրամաբանական օբյեկտը՝ ենթակա: Տրամաբանական սուբյեկտը կամ ներգործող խնդիրը՝ կրավորական սեռի խնդիր, արտահայտվում է կա՛մ բացառական հոլովով, կա՛մ սեռական հոլովի և *կողմից* կապի միջոցով. *Տղան սպանվեց հանցագործից //հանցագործի կողմից*:

Լինում են նաև ներգործող խնդրի՝ գործիական հոլովով գործածություններ՝ *Աղջիկը հիացած էր երիտասարդով: Սար ու ձոր ծածկվեց ձյունով*:

Չպետք է շփոթել ներգործող խնդիրը պատճառի պարագայի հետ՝ *Տղան ինքնամոռաց պաշտպանվում էր հարվածներից: Երեխան սրթսրթում է ցրտից*:

Ուղարկվել, հրավիրվել, ծաղրվել բայերը, ինչ կառույցում էլ լինեն, արտահայտում են կրավորականություն, բայց *հանձնվել, պատրաստվել, սկսվել* և նմանատիպ այլ բայեր, կախված կառույցից, արտահայտում են կրավորականություն կամ չեզոքություն. *Աշխատանքը հանձնվել է այս*

ուսանողների կողմից: Նա գերի հանձնվեց: Կամ Գյուղացիների կողմից սկսվեց աշխատանքը: Սկսվեց հորդառատ անձրև:

Մի շարք կրավորական բայեր արտահայտում են այնպիսի գործողություն, որը կատարում է ենթական, բայց այն ուղղված է նաև հենց իր վրա: Սրանք մեր քերականության մեջ անվանում են *անդրադարձ բայեր՝ լվացվել, սանրվել, զուգվել, փաթաթվել, յուղվել, օծվել, շպարվել, մաքրվել, օծվել* և այլն:

Ժամանակակից հայերենում կան մի շարք չեզոք (կրավորաձև չեզոք) բայեր՝ *–վ* ածանցով՝ *բնակվել, գանգալվել, գժվել, գունալվել, զբաղվել, հաշվել, հակվել, թաքնվել, խաղաղվել, խելագարվել, հարձակվել, հիասթափվել, հնազանդվել* և այլն: Այս խմբի բայերը եղել են կրավորաձև չեզոք նաև գրաբարում: Նրանցից մի քանիսը ունեցել են *Ե* լծորդությամբ ներգործականը՝ *խաղաղիմ-խաղաղեմ, հարձակիմ-հարձակեմ, հնազանդիմ-հնազանդեմ*:

Մի քանի կրավորական բայեր ցույց են տալիս երկու կամ մի քանի առարկաների գործողություններ, որոնք կատարում են առարկաներից յուրաքանչյուրը, բայց նաև հանդես են գալիս որպես մյուս առարկայի կատարած գործադրության օբյեկտ: սրանք *փոխադարձ* բայերն են՝ *համբուրվել, պաչպչվել, ծեծկվել, տեսնվել, ողջագուրվել, բախվել, զարկվել* և այլն. *Նրանք համբուրվում էին երկնի աստղերի տակ*:

Ա. Աբրահամյանը և մի շարք այլ լեզվաբաններ առաջ են բերում *միջին-անդրադարձ սեռային առումը*: Ենթական ինքը մասամբ կրում է, կատարում է, ունենում է դրության փոփոխություն: Կրավորաձև չեզոք է համարում առանց *–վ*-ի տարբերակ չունեցող բայերը՝ *սխալվել, հարձակվել, վախճանվել, զբաղվել, բնակվել* և նմանատիպ այլ բայեր (**Աբրահամյան Ա., 1962**):

1.4.Չեզոք սեռ: Այս բայերը զուրկ են ուղիղ խնդրի սեռային պահանջից, ցուցաբերում են չեզոք սեռի հատկանիշներ: Չեզոք սեռի դեպքում հանգումային առարկան արդեն ոչ թե հայցական հոլովով է, այլ՝ տրական, կամ այն կարող է լինել պարագա՝ հայցական հոլովով, բայց ոչ երբեք հայցական հոլովով ուղիղ խնդիր՝ *Մազերը թափվել էին երեսին: Տղան գնաց տուն* և այլն:

Շփոթության տեղիք է տալիս չեզոք սեռի՝ տրական հոլովով դրվող հանգման խնդիր լրացումը: Այն նման է անձի դեպքում տրականաձև հայցականին: Պետք է հիշել, որ չեզոք սեռի բայերը ցույց են տալիս հանգում, մոտեցում, ուղիղ ձևով չեն ազդում առարկայի վրա, հանգման խնդիրն էլ չի պատասխանում ուղիղ խնդրի *ու՛մ, ի՞նչ* հարցերին, այլ *ու՛մ, ինչի՞ն, ինչի՞* հարցերին՝ *Նրանք համաձայնեցին կարծիքին: Երեխան չէր հնազանդվում դաստիարակչուհուն: Ծովի գույնը փոխվեց կապույտի:* Հանգման խնդիրը կարող է դրվել *կապով ու կապի խնդրով՝ հարձակվել թշնամու վրա, բողոքել դատավճռի դեմ, ազդել ընկերոջ վրա:*

Տարօրինակ ու սխալ են *վազվել, հոգնվել, ընկնվել, փախչվել* և նման ձևերը: Հանդիպում են երբեմն սակավաթիվ այլ գործածություններ՝ *այս կոշիկով լավ է քայլվում, դրա համար նրան պիտի դիմվի, այստեղով դժվար կգնացվի:*

Սակայն չեզոք սեռի իմաստ են արտահայտում բազմաթիվ կրավորական բայեր՝ *բացվեց առավոտ, կուտակվեցին ամպեր, վերքը փակվեց, նա ոգևորվեց, տղան համոզվեց, արտերը փովել են, նա տանջվում է:*

Չեզոք սեռը ունի ուժեղ խնդրառություն՝ *վախենալ մահից, սարսափել նրանից, ծանծրանալ գանգադներից, ամաչել քեզանից* կապակցություններում լրացումները ներգործող խնդիրներ չեն: Տրականով արտահայտված լրացումները *օգնել ընկերներին, հասնել կայարանին, հանդիպել մարդու, պատկանել աշխատանքին* օրինակներում ևս ոչ թե ուղիղ խնդիրներ են, այլ անուղղակի:

Եթե տրամաբանորեն որոշենք բայի սեռը, ապա *դավաճանել, օգնել, տիրապետել* բայերը ևս կհամարենք ներգործական: Թեև սրանք բայի և խնդրի տրամաբանական հարաբերությամբ նման են ներգործականներին: Բայց այս բայերը պահանջում են անուղղակի խնդիր լրացում՝ *դավաճանել հայրենիքին, տիրապետել լեզվին:*

Նույն բայերը կարող են պատկանել և՛ ներգործական, և՛ չեզոք սեռերին՝ կախված իրենց իմաստներից՝ *ապրել Երևանում, ապրել լավ օրեր, նայել դաշտերին, նայել ֆիլմը:* Այս երևույթը կոչվում է *կրկնասեռություն*: Պետք է հաշվի

առնել, որ ձևով նույն, իմաստով տարբեր բայերը չի կարելի համարել կրկնասեռ՝ *մեկնել-բացատրել և մեկնել-գնալ*: Սրանք նույնանուն բայեր են: Կրկնասեռ բայերի իմաստային փոփոխությունները, երանգավորումները, տարբերակումները դուրս չեն գալիս նույն բայի իմաստային շրջանակից: Այսպիսի բայերից են *աշխատել, ապրել, նայել, պրծնել, շրջել, սպասել*. ապրել կյանք - ապրել երկրում, սովորել դասը-սովորել միջավայրին, կմարի կյանքս-մարել եմ աստղեր:

Բառիմաստի փոփոխությամբ սեռային տեղաշարժերը ակտիվ են նաև մեր օրերում՝ *զորքը կայանեց այստեղ-նա կայանեց զորքը, կրակել դիրքի վրա-կրակել անցորդին (Ավետիսյան Յու., 2024)*:

Արդի հայերենում շատ բայերի դեպքում այս միտումը ավարտված չի կարելի համարել: Օրինակ՝ *գերազանցել, կարողել, հսկել* և այլ բայեր կարելի է համարել չեզոքից ներգործական սեռին անցնող: Կրկնասեռ չի կարելի համարել այն բայերը, որոնք լծորդությունների տարբերություններով ունեն սեռային տարբերություններ՝ *Ա լծորդությամբ՝ չեզոք, իսկ Ե լծորդությամբ՝ ներգործական՝ ծխալ//ծխել, փողփողալ//փողփողել, երերալ//երերել, թվալ//թվել, ծփալ//ծփել* և այլն:

Սեռերի արտահայտման մեջ կարևոր են բայիմաստները: Ըստ սրանց՝ փոխվում են սեռերը. շրջել-շուտ տալ /շրջել-ման գալ, մեկնել-բացատրել/մեկնել-գնալ:

2.Բայասեռի ըմբռնումը և ձևակերպումը արևմտահայերենում:

2.1.Ներգործական սեռը արևմտահայերենում: Այստեղ ևս ներգործական սեռի բայերը արտահայտում են այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է կրող առարկա՝ ուղիղ խնդիր: Արևմտահայերենում ուղիղ խնդիրը դրվում է միայն ուղղական (բուն հայցական) հոլովով: Այստեղ որոշ բայեր՝ *ազդել, խնայել, յաղթել, ներել, վնասել*, սկսել են ստանալ անձի առումով ուղիղ խնդիր՝ *Արշակը յաղթեց Արամին: Գեղամը վնասեց բարեկամներուն:* Սրա բացատրությունն այն է, որ այս բայերը, ըստ գործածության կամ բառիմաստի,

կարող են ստանալ նաև տրականաձև հայցականով ուղիղ խնդիր **(Ավետիսյան Յու., 2007)**:

Ըստ արևմտահայ քերական Կ. Առաքելյանի՝ սրանք ներգործական սեռի բայեր չեն, թեև ունեն կրավորական տարբերակներ, և սրանց լրացումը տրական հոլովով անուղղակի խնդիր է **(Առաքելյան Կ., 1998)**:

Ըստ Ռ. Սաքապետոյանի՝ գործածությունների այս յուրահատկությունները քերականական նոր իրողություններ են, որ արևմտահայերենում ձևավորվել են սկսել արևելահայերենի ազդեցությամբ: *Խնայել հացը և խնայել մեղավորին, զարնել թռչուն և զարնել Աշոտին, ներել պարտքը և ներել աշակերտին* **(Սաքապետոյան Ռ., 2006)**:

Երկու գրական հայերեններում էլ *-ցն-* ածանց ունեցող գրեթե բոլոր բայերը ներգործական սեռի են՝ *ճանչցնել, խենթեցնել, վազցնել// վազեցնել, լայնցնել, լեցնել* և այլն: Սրանք ընդունում են նույն բնույթի հարցեր՝ որոշ ձևային տարբերությամբ. արևելահայերենում՝ *ո՞ւմ, ի՞նչ(ը), արևմտահայերենում՝ որո՞ւ, ի՞նչ(ը), զո՞ւ*: Արևմտահայերենում էլ ներգործական են հիմնականում Ե խոն. բայերը, Ա խոնարհումից որոշ բայեր. *ջրել, բերել, ներկել, անել/ընել, ասել/ըսել, բանալ, մոռնալ, գիտնալ, կարդալ, սորվիլ* և այլն:

2.2.Կրավորական սեռը արևմտահայերենում: Այս բայերը ցույց են տալիս գործողության անցում այլ առարկայից ենթակայից: Ձևային հակադրությունն *-ու(-վ-)* ածանցի պարտադիր առկայությունն է: Արևմտահայերենում ևս կրավորական սեռի բայերը կազմվում են ներգործականներից: Բայի սեռի փոփոխություններից՝ փոխվում է նախադասության կառուցվածքը: Կրավորական սեռի ցուցիչը նույն *-վ-*ն է, որը արևմտահայերենում դառնում է *-ու-*, ավելանում է *Ե* և *Ի* խոնարհման աններածանց բայերի ներկայի հիմքին՝ *բերել-բերուիլ, խօսիլ-խօսուիլ, զարնել-զարնուիլ, գրել-գրուիլ*, իսկ *Ա* խոնարհման աններածանց ու սոսկածանցավոր բայերի անցյալի հիմքին՝ *կարդալ-կարդացուիլ, հասկնալ-հասկցուիլ, հեռանալ-հեռացուիլ, մոռնալ-մոռցուիլ*: Արևմտահայերենում պատճառական բայերի

դեպքում *-ու-*ն ավելանում է *-ցն-* ածանցի *-ն-*ի փոխարեն՝ *հարստացնել-հարստացուիլ*: Այս դեպքում պատճառական բայերը և սկզբնաձևերը նույնանում են՝ *հասկանալ-հասկացուիլ, հասկացնել-հասկացուիլ*:

2.3.Չեզոք սեռը արևմտահայերենում: Այս բայերը ցույց են տալիս ենթակայի այնպիսի գործողություն, որի կատարման համար չի պահանջվում անմիջապես առարկա՝ որպես ուղիղ խնդիր: Չեզոք սեռի բայերը *-ու-(-վ-)* ստանալ չեն կարող և ձևային ընդհանրություն չունեն և՛ արևմտահայերենում, և՛ արևելահայերենում:

Չեզոք սեռի են *-ան-*, *-ն-* սոսկածանց ունեցող բայերի մեծ մասը և *-չ-*ով բոլոր բայերը՝ *մեռնիլ, բուսնիլ, իջնել, իյնալ, հիանալ, թռչիլ, փախչիլ*: Այստեղ արդեն մասնակի տարբերություններ կան արևելահայերենի ու արևմտահայերենի միջև. արևմտահայերենում ներգործական սեռի որոշ բայեր չեզոքի իմաստ են արտահայտում լծորդության փոփոխությամբ՝ *-ել* մասնիկը փոխելով *-իլ*-ի: Պոլսի բարբառում *-իլ*-ով վերջացող չեզոք բայերից ստացվում են ներգործական սեռի բայեր՝ *-իլ*-ը վերածելով *-ել*-ի. արդյունքում արևմտահայերենում ունենք *ազադիլ/ազադել, էրիլ/էրել, վառիլ/վառել* և այլ տարբերակները կամ *ծավալել-ծավալիլ, շարժել-շարժիլ* ձևերը (**Աճառյան Հ., 1959**): Միջին հայերենի անցողական բայերի երեք սեռերն էլ պահպանվել են Պոլսի բարբառում, որից էլ մասնակիորեն անցել են արևմտահայ գրական լզվին: Վերջինում էլ մի քանի ներգործական բայեր կրավորական սեռի ձևից բացի ունեն առանձին չեզոք սեռի ձևեր. *թափել//թափիլ//թափվիլ, այրել//այրիլ//այրվիլ, մարել//մարիլ//մարվիլ* (**Այտընեան Ա., 1866**):

Փոխադարձ, անդրադարձ և *կրավորակերպ չեզոքները* արևմտահայերենում Ի խոնարհման են՝ *բարւոքուիլ, գունաւորուիլ, սուզուիլ, գրկախառնուիլ, լուացուիլ* և այլն:

Անդրադարձ և *փոխադարձ* բայերի համար իբրև տարբերակիչ հատկանիշ է նշվում դրանց ենթակայի շնչավոր լինելը (**Ավետիսյան Յու., 2007**):

Արևմտահայերենին բնորոշ է կրկնասեռությունը: Կան բազմիմաստ բայեր, որոնք տարբեր իմաստներով պատկանում են տարբեր սեռերի. *սորվիլ-ուսանել/սորվիլ-վարժվել, լսել-ունկնդրել/լսել-հնազանդվել, նայիլ-աչք:*

-Ու-(վ) ածանց ունեցող բոլոր բայերը չէ, որ կրավորական են: Դրանք հավասարաչափ գործածվում են և՛ որպես կրավորական, և՛ որպես չեզոք: *Նամակը գրուեցաւ իմ կողմէս:*-կրավորական, *Տղան կամաւոր գրուեցաւ:*-չեզոք:

Առանձին բառեր կամ բառակապակցություններ, որոնք արևմտահայերենում ունենում են բառիմաստի տարբերություն, երևան են հանում նաև սեռային տարբերություն. *մորիկ ընել/լսել*-ներգործական, *մորիկ անել/նայել*-չեզոք:

Վայելել և վայլել բայերը նույն *Ե* լծորդության են, բայց պատկանում են տարբեր սեռերի՝ *վայելել-ըմբռնխնել, ունենալ, վայլել-սազել:*

3. Ժամանակակից հայերենի սեռորոշ մասնիկները:

Ժամանակակից հայերենի սեռանիշ մասնիկները երկուսն են՝ $(ա, ե)g(ն/ր)$ և $-վ$: $(ա, ե)g(ն/ր)$ մասնիկը եռաբաղադրիչ է.

$.-g-$, որ մասնիկի իմաստի բուն կրողն է, ծագմամբ նույնն է կատարյալի g -ի հետ,

$.ա, ե$ ձայնավորներ, որոնք նույն կատարյալի հիմքի $ա$ և $ե$ -ն են, որոնց բացակայությունը որոշվում է կատարյալի հիմքում նրանց բացակայությամբ՝ զրո մասնիկով՝ *խոսեց-խոս-ե-ց-խոս-ե-ց-ն/ր-*, *մն-ա-ց-մն-ա-ց-ն/ր-* և այլն:

$.ն/ր-$ ն, որը նույնն է կերպատիպարանիշ մասնիկի հետ, և որի բացակայությունը որոշվում է հաջորդող $վ$ -ի առկայությամբ: Այս մասնիկը հանդես է գալիս ինը դիրքային տարբերակներում՝ *ացն, եցն, ցն, ացր, եցր, ցր, աց, եց, ց*: Առաջին վեց տարբերակներով օժտված բայաձևերը խոնարհվում են հետևյալ կերպ՝ *վեր-ցն-եմ, վեր-ցր-ի, վեր-ցր-ու, վեր-ցր-ե՛ք, խոս-եց-վ-եմ, խոս-եց-վ-եց-ի* :

$-Վ$ -ն կարող է հանդիպել ինչպես նախորդող $(ա, ե)g (ն/ր)$ մասնիկի ուղեկցությամբ, այնպես էլ առանց նրա՝ *գրվեմ, բերվեմ, թողնվեմ, տեսնվեմ, հագնվեմ, վերցվեմ*:

-Վ-ի հավելման դեպքում մասնակաղապարային փոփոխություններ չեն կրում միայն որոշ բայեր՝ *խոսվի՛ր-խոսի՛ր, խոսվեց-խոսեց*: Մնացած բոլոր դեպքերում բայերի խոնարհման մասնակաղապարները խախտվում են, փոխվում՝ *մնացվեմ-մնամ-մնա՛, մոտեցվեցե՛ք-մոտեցե՛ք*:

-Վ-ն ցույց է տալիս կրավորականություն- ոչ կրավորականություն հակադրություն, բայց որոշ բայական հիմքերի դեպքում՝ անդրադարձություն-ոչ անդրադարձություն, փոխադարձություն-ոչ փոխադարձություն հակադրություններ: **Աննան և Արմենը ողջագուրվեցին** նախադասության մեջ երկուսն էլ ենթակա են, իսկ **Աննան ողջագուրվեց Արմենի հետ** նախադասության մեջ Աննա-ն ենթակա է, Արմենի հետ-ը միասնության խնդիր: Կան բայեր, որոնք առանց -վ-ի գործածություն չունեն՝ սիրահարվել, հարձակվել:

Բայական մյուս ածանցները չի կարելի սեռանիշ անվանել, քանի որ դրանք հավասարապես հանդես են գալիս և՛ ներգործական, և՛ չեզոք սեռի բայերում:

Սոսկածանցավոր -ան- ածանց ունեցող բայերում ներգործական են *գողանալ, իմանալ, խոստանալ* և այլ բայեր, չեզոք են *զարգանալ, զարմանալ, զլանալ, ընթանալ* և այլ բայեր: -Ան- ածանց ունեցողներից որոշները ունեն իրենց անաժանց զուգահեռները՝ *բարդանալ//բարդել, ձևանալ//ձևել, կարճանալ//կարճել, նեղանալ//նեղել, չորանալ//չորել*, որոնց մեջ զուգահեռությունները տարբեր սեռերի են:

-Են ածանցավոր բայերը հայերենում քիչ են: Կան երկու սեռերն էլ՝ *արբենալ, արժենալ*՝ չեզոք, *գիտենալ, կամենալ, ուզենալ*՝ ներգործական:

Նույնն է նաև -ն- ածանցի դեպքում. *անցնել, առնել, գտնել, թողնել, լցնել, հագնել*, ՝ ներգործական, *ելնել, ընկնել, իջնել, բուսնել, լինել, հասնել, մեռնել*՝ չեզոք: -չ- ածանցովները չեզոք են՝ *թռչել, կորչել, թաքչել, հալչել, հանգչել, ուռչել, սառչել*:

Բազմապատկական -ապ-, -ոպ-, -կոպ-, -տ-, -կլտ-, -ռոպ-, -կռոպ- ածանցներով բայերի ճնշող մեծամասնությունը ներգործական սեռի են: Չեզոքները շատ քիչ են: *Կապոտել, տնտրոտել, խոցոտել, ծալծլոտել, պոկոտել*

բայերը ներգործական են, *հուրհրապել, ցաղկոպել, քնոպել, նսպոպել, սաղկոպել*՝ չեզոք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակը, անընդհատ փոփոխվող լեզվամտածողությունը, պահանջները, օտար ազդեցությունները իրենց ազդեցությունն են ունեցել լեզվական ցանկացած երևույթի վրա, այդ թվում՝ բայի սեռի, ինչն էլ ժամանակի ընթացքում զարգացել է, ճշգրտվել, պարզեցվել, հստակեցվել: Այսպիսով՝

1. Ներգործական սեռի բայերը ունեն հայցական հոլովով ուղիղ խնդիր կամ բացառականով մասնական ուղիղ խնդիր լրացում:
2. Ոչ բոլոր ներգործական սեռի բայերն ունեն իրենց կրավորականները:
3. Գրեթե բոլոր պատճառական բայերը ներգործական են:
4. Եթե ներգործականում առաջնային է սուբյեկտը, ապա կրավորականում օբյեկտի դերն ավելի է մեծանում:
5. Կրավորական սեռի բայերը պիտի ունենան բացառականով ներգործման անուղղակի խնդիր լրացում, պիտի հստակ լինի գործողության կրումը այլ առարկայից, և պարտադիր առկա լինի *–վ–* ածանցը, սակայն սոսկ *–վ–*ի առկայությունը բավարար չէ բայը համարելու կրավորական:
6. Չեզոք սեռի դեպքում տրամաբանական սուբյեկտն ու տրամաբանական ենթական համընկնում են: Հանգումային առարկան տրական հոլովով է, կարող է լինել հայցականով, բայց պարագա:
7. Սեռերի անընդհատ զարգացման ու փոփոխության ամենավառ ապացույցներից է նաև բայերի կրկնասեռությունը, որը կա նաև արևմտահայերենում:
8. Արևմտահայերենում ուղիղ խնդիրը դրվում է միայն ուղղական հոլովով: Թեև վերջին շրջանում այն սկսել է դրվել տրականաձև հայցականով: Սրանք քերականական նոր իրողություններ են՝ արևելահայերենի ազդեցությամբ:

9. Արևմտայերենում ևս գրեթե բոլոր պատճառական բայերը ներգործական են:
10. Արևմտահայերենում կրավորական սեռի ցուցիչը –ու-ն է:
11. Սեռորոշ մասնիկների ու վերը նշած բազմաթիվ ապացույցների միջոցով հստակ որոշվում է բայի սեռը: Այն գրեթե վիճահարույց չէ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբեղյան Մ. (1965)**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք» հրատ.:
2. **Աբրահամյան Ա. (1962)**, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, ԳԱԱ հրատ.:
3. **Աղայան Է. (1967)**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, ԳԱԱ հրատ.:
4. **Աճառյան Հ. (1940)**, Հայոց լեզվի պատմություն, մաս 1, Երևան, ԵՊՀ հրատ.:
5. **Աճառյան Հ. (1951)**, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Երևան, ԵՊՀ հրատ.:
6. **Այտընեան Ա. (1866)**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Երևան, ԵՊՀ հրատ.:
7. **Ավետիսյան Յու. (2007)**, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Երևան, ԵՊՀ հրատ.:
8. **Ավետիսյան Յու. (2024)**, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Երևան, «Զանգակ» հրատ.:
9. **Բարսեղյան Հ. (1953)**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, ԳԱԱ հրատ.:
10. **Գյուլգաստյան Դ. (2015)**, Անցողականության և բայասեռի քերականական կարգերի տիպաբանություն, «Բանբեր», N 3, (102), ԵՊՀ հրատ., 37-44 էջ:
11. **Պալասանյան Ս. (1906)**, Քերականություն մայրենի լեզուի, 5-րդ տիպ, Թիֆլիս, «Հայկական տպագրական ընկ.» հրատ.:

12. **Սաքապետոյան Ռ. (2006)**, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, ԵՊՀ հրատ.:

REFERENCES

1. **Abeghyan M. (1965)**, Hayoc lezvi tesowt'yown /Theory of the Armenian Language/, Yerevan, "Mitq" Publishing House.
2. **Abrahamyan A. (1962)**, Bayy' jhamanakakic hayerenowm /The Verb in Modern Armenian/, Yerevan, NAS Publishing House.
3. **Aghayan E. (1967)**, Jhamanakakic hayereni holowowmy' ev xonarhowmy' /Inflection and Conjugation of Modern Armenian/, Yerevan, NAS Publishing House.
4. **Acharyan H. (1940)**, Hayoc lezvi patmowt'yown /History of the Armenian Language/, Part 1, Yerevan, YSU Publishing House.
5. **Acharyan H. (1951)**, Hayoc lezvi patmowt'yown /History of the Armenian Language/, Part 2, Yerevan, YSU Publishing House.
6. **Aytyan A. (1866)**, Qnnakan qerakanowt'iwn ashxarhabar kam ardi hayere'n lezowi /Examination Grammar of the World or Modern Armenian Language/, Yerevan, YSU Publishing House.
7. **Avetisyan Yu. (2007)**, Arelahayereni ev arevmtahayereni zowgadrakan qerakanowt'yown /Comparative grammar of Eastern and Western Armenian/, Yerevan, YSU Publishing House.
8. **Avetisyan Yu. (2024)**, Jhamanakakic hayoc lezow. D'evabanowt'yown /Modern Armenian language, Morphology/, Yerevan, "Zangak" Publishing House.
9. **Barseghyan H. (1953)**, Ardi hayereni bayi ev xonarhman tesowt'yown /Theory of verb and conjugation in modern Armenian/, Yerevan, NAS Publishing House.
10. **Gyulzatyan D. (2015)**, Ancoghakanowt'yan ev bayaser'i qerakanakan kargeri tipabanowt'yown /Typology of transitivity and verb gender grammatical orders/, "Banber", No. 3, (102), YSU Publishing House., pp. 37-44.

11. **Palasanyan S. (1906)**, Qerakanowt'iwn mayreni lezowi /Grammar of the native language/, 5th edition, Tbilisi, "Armenian Printing Company" Publishing House.
12. **Sakapetoyan R. (2006)**, Arevmtahayereni dasagirq /Textbook of Western/ Armenian, Yerevan, YSU Publishing House.

Armine Poghosyan, Ani Poghosyan

**Controversial issues of verb gender in Eastern Armenian
Comparison with Western Armenian Gender-defining particles
Conclusion**

Keywords and expressions: *Verb gender, neuter, intransitive, passive, particle, verb, suffix, direct object.*

Language is a living organism and is subject to various influences and changes over time. Verb voice, more than any other linguistic unit or grammatical order, has changed considerably over the years and centuries. And now we have many controversial issues related to verb voice. The goal of our work is to show these changes and to give a solid answer to the problematic questions.

Let's remember that the gender order of a verb indicates the relationship between the grammatical subject and the object, the logical subject and the object. In other words, gender expresses the verb's ability to take on a task and its relationship to that task and subject.

By also presenting a brief study of gender-defining particles, we will provide a grammatical canonical picture of voice order in both Eastern and Western Armenian. There are conflicting opinions and very different perspectives. We will bring these together, summarize them, and understand how voice-defining particles help to distinguish the voice of a verb, and answer all the controversial questions related to voice. We will also briefly present a picture of the decades-long process of

studying the voices of modern Armenian. We will also make comparisons with Western Armenian.

Армине Погосян, Ани Погосян

Спорные вопросы рода глагола в восточноармянском языке

Сравнение с западноармянским частицы, определяющие пол

Заключение

Ключевые слова и выражения: *Род глагола, средний род, непереходный, страдательный залог, частица, глагол, суффикс, прямое дополнение.*

Язык — это живой организм, который подвержен различным влияниям и изменениям с течением времени. Род глагола, больше, чем любая другая языковая единица или грамматический порядок, значительно изменился за годы и столетия. И теперь у нас есть много спорных вопросов, связанных с родом глагола. Цель нашей работы — показать эти изменения и дать четкий ответ на проблемные вопросы.

Давайте вспомним, что род глагола указывает на отношение между грамматическим субъектом и дополнением, логическим субъектом и дополнением. Другими словами, род выражает способность глагола выполнять задачу и его отношение к этой задаче и подлежащему.

Также представив краткое исследование частиц, определяющих род, мы предоставим грамматическую каноническую картину порядка рода как в восточноармянском, так и в западноармянском языках. Существуют противоречивые мнения и очень разные точки зрения. Мы соберем их вместе, обобщим и поймем, как частицы, определяющие род, помогают различать род глагола, и ответим на все спорные вопросы, связанные с родом. Мы также кратко представим картину многолетнего процесса изучения родов современного армянского языка. Мы также сделаем сравнения с западноармянским.

Արմինե Պողոսյան - Երևանի Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան հ. 168 հիմնական դպրոցի ուսուցչուհի: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզու, լեզվաբանական հարցեր: poxosyana1004@gmail.com

Անի Պողոսյան-Երևանի Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի անվան թիվ 168 հիմնական դպրոցի ուսուցչուհի: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզու, լեզվաբանական հարցեր: anipoghosyanlil2023@gmail.com

Armine Poghosyan- teacher of Yerevan Catholicos of All Armenians Vazgen I No. 168 Primary School. Scientific interests: Armenian language, problems of linguistics. poxosyana1004@gmail.com

Ani Poghosyan - teacher of Yerevan Catholicos of All Armenians Vazgen I No. 168 Primary School. Scientific interests: Armenian language, problems of linguistics. anipoghosyanlil2023@gmail.com

Армине Погосян - учительница начальной школы № 168 имени Вазгена I Католикоса Всех Армян г. Еревана. Научные интересы: армянский язык, проблемы языкознания. poxosyana1004@gmail.com

Ани Погосян - учительница начальной школы № 168 имени Вазгена I Католикоса Всех Армян г. Еревана. Научные интересы: армянский язык, проблемы языкознания. anipoghosyanlil2023@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 02.04.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 14.04.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ